Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19 -ի N 1230 - Ն որոշման

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
# ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1.**Անունը**, **ազգանունը**.

Լենա Նանուշյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**.

Առողջապահության նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները**.

Իսպանիայի Թագավորություն (Բարսելոնա), 2018 թվական, նոյեմբերի 19-21

4. **Հրավիրող կողմը**.

Առողջապահության համաշխարհային կազմակերպություն

5. **Գործուղման նպատակը** (**աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը**).

Մասնակցություն տուբերկուլոզի կանխարգելման և բուժման օպտիմալացման նպատակով առողջապահության համակարգի վերաբերյալ Առողջապահության համաշխարհային կազմակերպության դասընթացին:

Վերջինս նպատակ ուներ ընդգծելու առաջիկա տարիներին տուբերկուլոզի համաճարակի հակազդմանն ուղղված միջոցառումների կարևորությունը և քայլեր ձեռնարկելու վերջինս կանխարգելելու ուղղությամբ:

6. **Քննարկված թեմաները**.

Միջոցառմանը հրավիրված էին մասնակցելու ԱՀԿ անդամ-պետությունների, միջազգային կառույցների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, փորձագետներ:

Հանդիպմանը քննարկվեցին առողջապահական համակարգին, ֆինանսավորմանը, բժշկական ծառայությունների կազմակերպմանը, ծառայությունների տրամադրմանը, ռազմավարական կառավարմանն առնչվող հարցեր, որոնք նախատեսված են TB-REP ծրագրով:

7. **Հանդիպումները**, **ելույթները**, **բարձրացված կամ քննարկված հարցերը**

Տուբերկուլոզի դեմ պայքարի վերաբերյալ ելույթով հանդես եկավ Առողջապահության նախարարի տեղակալ Լենա Նանուշյանը:

Ներկայացվեցին նշված ոլորտներում Հայաստանի կողմից իրականացված աշխատանքները, գրանցած հաջողություններն ու հետագա քայլերը:

Հանդիպման ընթացքում ընդգծվեց տուբերկուլոզի դեմ պայքարի բնագավառում երկրների փոխհամաձայնեցված գործողությունների իրականացման անհրաժեշտությունը:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները**, **պայմանավոր-վածությունները**, **ստորագրված փաստաթղթերը**.

Համաժողովին ներկայացվեցին երկրների դրական փորձը, միջազգային փորձագետների, հեղինակավոր մասնագետների կարծիքներն ու առաջարկները տուբերկուլոզի կանխարգելման և բուժման ուղղությամբ, ինչպես նաև վերջիններիս արդյունավետ կիրառման եղանակները: Ներկայացվեցին տուբերկուլոզի դեմ պայքարին ուղղված նորագույն մոտեցումները, միջազգային կազմակերպությունների ուղեցույցները, բժշկական ծառայությունների տրամադրման նոր սխեմաները, մարտահրավերներն ու մարդկային ռեսուրսների կանխատեսումը:

Տարբեր երկրների առողջապահության ոլորտի ներկայացուցիչների հետ քննարկվեցին հնարավոր համագործակցության ուղղություններն ու հեռանկարները,

որոնք կնպաստեն միմյանց բնակչությունների առողջության բարելավմանը և բարեկեցությանը:

9. **Առաջարկությունները**, **դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը**, **ձևը**, **ժամկետները**, **պատասխանատուները**, **ակնկալվող արդյունքները**.

Առաջարկվեց պայմանավորված ուղղություններով համատեղել երկրների ջանքերը և ակտիվացնել փոխգործակցությունը տուբերկուլոզի կանխարգելման ուղղությամբ:

10. **Ստորագրությունը**, **ամսաթիվը**:

2018թ. նոյեմբերի 22

23.11.2018

X

VERIFIED OCSP 23.11.2018 18:39:03 GMT+4

Signed by: NANUSHYAN LENA 5114750164